

ՆԱԽԱԳԱՀԻՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Մեր վերջին թիւերուն մէջ կը գրէինք արդէն այն մտահոգիչ կացութեան մասին որու մատնուած էր Արծուաշէն հայկական գիւղը (Աղբրեջանի տարածքի վրայ) եւ հակառակ վերջին օրուան փրկարար գործողութեան, որու ջնորհիւ բացուած էր կառուղին, կարելի չեղաւ տէր մնալ գիւղին աղբրեջանական բուն հակայարձակման հետեւանքով: Ծարաթ օր, Օգոստոս 8-ին, հարկ եղաւ պարպել գիւղին 1500 - 2000 բնակիչները եւ փոխադրել Կրասնոսելսկ: Կռիւները շատ բուն եղած են մինչեւ հայկական ուժերու նահանջը եւ 22 Հայ մարտիկներ զոհ գացած են: Յիշենք որ Արծուաշէն 46 քառակուսի քիլոմետր տարածութեամբ հայկական գիւղ մըն է: 12 քիլոմետր կառուղի կայ սակայն Աղբրեջանի տարածքի վրայ: Հանրապետութեան եւ Սորհրդարանի նախագահները հեռազրեր զրկած են ՀԱՊ-ի Պետութեանց իրենց պաշտօնակիցներուն հողային այս բռնարարման առնչութեամբ, քանի որ Տաշկենտի համաձայնութեամբ, անդամ որեւէ Պետութեան դէմ յարձակումի պարագային, ՀԱՊ-ը սկտք է պաշտպանէ այդ երկիրը:



Արցախի մէջ, գլխաւորաբար Մարտակերտի շրջանը, մարտերը կը շարունակէին նոյն ձեւով: Անցեալ շաբթուան ընթացքին Մաղաւուղի վրայ աղբրեջանական յարձակման հետեւանքով 68 մեռեալ կար (60 Աղբրի, 8 Հայ): «Արմէնփրէս» կը հաղորդէր Օգոստոս 8-ին թէ նախորդ իրիկուն Մարտակերտի շրջանի հայկական ուժերը կրակ բացած են աղբրեջանական ՄԻԿ -- 24 օդանաւի մը վրայ, որ 30 հրասայլերու եւ բազմաթիւ գրահակառքերու հետ կը մտանակցէր Մաղաւուղի եւ Մոխրաթաղի վրայ կատարուած յարձակումներուն:

Նոյն օրը Աղղամէն ուժակոծուած են Մարտունիի շրջանի Բերդաշէն եւ Նորջէն գիւղերը, ուր 3 մեռեալ եւ 15 վիրաւոր կայ, որոնց մէջ կիներ եւ երախաներ:

Հանրապետութեան նախագահ Լեւոն Տէր - Պետրոսեան հետեւեալ ուղերձը կատարած է Լեւոնային Ղարաբաղի Ժողովուրդին. --

«Սիրելի հայրենակիցներ, վերջին ամիսներին Ադրբեջանի ղեկավարութիւնը կտրուկ ակտիւացրել է Լեւոնային Ղարաբաղի հանրապետութեան Հայաստանի սահմանամերձ շրջանների դէմ ուղղուած ռազմական գործողութիւնները: Ադրբեջանական բանակի յաջողութիւնները բացատրուում են նախկին խորհրդային բանակից ստացուած ժամանակակից ռազմական տեխնիկայի մեծ քանակով: Հակառակ դրան, Ղարաբաղի ինքնապաշտպանական ուժերը մեծ ջանքերի եւ գոհողութիւնների գնով կարողանում են դիմակայել կանգնեցնելով ադրբեջանական ուժերի յառաջխաղացումը եւ ազատագրելով Մարտակերտի շրջանի գրաւուած հայկական վայրերի գգալի մասը: Սակայն ադրբեջանական բանակը փորձում է ռազմի դաշտում կրած պարտութիւնները ռակ դրան, Ղարաբաղի ինքնապաշտպանակցութեան հանդէպ վայրագ գործողութիւններով: Օգոստոսի 6-ին Ստեփանակերտի հրքիռակոծման հետեւանքով գոհուել եւ վիրաւորուել են քաղաքի տարածակ խաղաղ բնակիչներ: Ադրբեջանի գործողութիւններն ուղղուած են հա-

կամարուտեան խաղաղ կարգաւորման վիժեցմանը: Հայաստանի իշխանութիւնները կողմ լինելով հարցի քաղաքական լուծմանը եւ խրախուսելով Ռուսաստանի եւ միւս երկրների միջնորդական ջանքերը, ինչպէս նաեւ ՍԷ -- ԷՍ -- ՍԷ -- Ը-ի շրջանակներում հարցի կարգաւորման փորձերը, միաժամանակ չեն կարող անտարբերութեամբ վերաբերուել Ղարաբաղի ժողովրդի դէմ ուղղուած բարբարոսական գործողութիւններին:

«Ես հպարտանում եմ հայրենի հողի վրայ ապրելու իրենց իրաւունքը պաշտպանող Ղարաբաղցիների քաջութեամբ եւ տոկունութեամբ:

«Նորապէս ցաւակցում եմ գոհուածների ընտանիքներին եւ մտերիւմներին»:



Ռազմադաշտէն ետք Արցախցիին զբխաւոր հարցն է գաղթականներու պարագան. միայն վերջին երկու ամսուան մէջ կիսաւեր Ստեփանակերտը շուրջ 30 հազար գաղթական ներուած է ոչ միայն Աղբրեջանցիներու գրաւած ու պարպած շրջաններէն, այլ նաեւ՝ Մարտունիէն եւ Հաղբութէն ուր չեն գաղթիլ խաղաղ գիւղերու գանդուածային ուժակոծումները: Ստեփանակերտի իշխանութիւնները անոնց տրամադրած են զպրոցներու եւ մանկապարտէզներու շէնքերը: Այս ձեւով տեղաւորուած են ութ հազար հոգի, իսկ մնացեալը պարտաւորուած է առ այժմ սրատասարուելու ազգականներու, ծանօթներու տունը, երբեմն ալ վարչական շէնքերու մէջ: Քաղաքին գերբնակեցման պատճառով չի բաւեր հացը, մանաւանդ որ գիւղատնտեսական աշխատանքները այս տարի փաստօրէն չեն կատարուած: Բացի ատիէ, հացահատիկի արտերուն հիմնական մասը վերածուած է ռազմական գործողութիւններու գօտիի: Արցախցին համոզուած է որ գաղթականներու խնդիրը սկտք է լուծուի գտնէ մարտագաշտին վրայ. սկտք է ազատագրել թընամիլին գրաւած հողերը որպէսզի անոնց տէրերը վերադառնան իրենց տուները:



Ռմրակոծումները կը շարունակուին Կապանի եւ Մեղրիի վրայ:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԱՐԵՒՄՏԵԱՆՆԵՐԸ կը խորհին զինուորական միջամտութեան մը մասին Պոսնիա -- Հերզեկովին, որ սակայն նախատակ ունենայ միայն մարդասիրական օժանդակութիւնը պաշտպանել: Ամէն կողմէ ճնշում կայ եւ շատ կը ձաղկուի արեւմուտքի կրաւորական գիրքը, բայց, Պուշկոզմնակից չէ ամերիկացի զինուոր գրկելու, որովհետեւ կ'ըսէ. -- «Ես ինքզինքս խնդրոյ առարկայ չեմ գտար քաղաքական ներքին ճնշումներէն: Նախքան գինուորներու կամ մառիկներու մասնակցութիւնը ձակատամարտի մը, կ'ուզեմ գիտնալ թէ ինչպէս մէջէն պիտի ելլեն եւ մենք զմեզ կեռիլլայի մը մէջ մխրճուած սկտք չէ գտնենք»: Անշուշտ, այսքան երկար արդարացումի մը տեղ, նախագահ Պուշկոզմնար մէկ խօսքով զոհանալ -- «Հոն, քարիւղ չկայ, կը հասկնամք»: Փրոֆ. Մինքովսկի, որ նոր կը վերադառնայ Եւրոպայից, խորապէս վրդոված է